ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԱԲՈՎՅԱՆ

ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Պ Ա Տ Ճ Ե Ն

03 մայիսի 2012 թվականի N 273

ԳԱՅԱՆԵ ԻՍՈՅԱՆԻՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի N 73-Ն որոշման 1-ին կետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գայանե Իսոյանի 2012 թվականի մարտի 26-ի N ք-362 հայտը.

1. Գայանե Իսոյանին տալ 2012 թվականի ընթացքում Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 16 շենքի մոտ գտնվող խանութում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվություն:

2. Գայանե Իսոյանը պարտավոր է Աբովյանի քաղաքապետարանի 900105201447 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 50000 (հիսուն հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Իսոյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Քաղաքապետ Կ. Գուլոյան

2012թ. մայիսի 03
ք. Աբովյան